մեր բարեկամությունը դարերի պատմություն ունի: Հետո էլ մենք երբեք չենք մոռանում, որ հայ ազգին կոտորողները թուրքերն են եղել, եւ եթե Ռուսաստանը որոշի թուրքիայի հետ մտնի պատերազմական փուլ, մենք ինքնըստինքյան կլինենք պատերազմի մեջ: Մենք չենք կարող դավաճանել մեր դաշնակցին, նախ՝ քանի որ ՀՀ ՊՆ-ի անդամ ենք, հետո էլ՝ հայր դավաճան ընկեր լինել չի կարող: Մենք պետք է պատրաստ լինենք ցանկացած պահի, ցանկացած գործողության:

- Այսինքն՝ այնպես, որ պատերազմի վտանգ այնուամենայնիվ տեսնում եք:

- Հիմա այն իրավիճակն է ստեղծվել, որ ոչինչ կանխատեսել կամ բացառել հնարավոր չէ: Բայց եթե Ռուսաստանը մտավ պատերազմի մեջ, մի վայրկյան անգամ չկասկածեք, որ մենք էլ ենք հայտնվելու պատերազմական իրավիճակում: Իսկ պատերազմի մեջ հաստատ պատրաստ ենք ցանկացած պահի, ցանկացած վայրում: Բա եթե մեր դաշնակցի երկիրը մտավ լայնամասշտաբ պատերազմի մեջ, մենք ինչն էլ մտենք մի անկյուն ու կատվի պես նվճվանք. պիտի մենք էլ մտնենք պատերազմի մեջ, այլ ճանապարհ չկա:

Վերջապես՝ մեկնումս պետք է դաստիարակի թուրքիային, թե՛ չէ: Ինչ է եղել, թող դաստիարակողն էլ Ռուսաստանը լինի:

Այնպես որ՝ ես կողմնակից եմ, որ Ռուսաստանն այդ կոշտ վերաբերմունքը պահի մինչեւ վերջ, եւ մենք միասնական ուժերով, վատահ եղեք, կկարողանանք ջախջախել թուրքերին: Ես կողմնակից եմ միասնականությանը:

- Պարոն Մովսիսյան, հնարավոր է, որ ստեղծված լարվածությունը տեղափոխվի Լեռնային Ղարաբաղ:

- Մենք ոչ մի խնդիր չունենք: Եթե ճիշտ պահենք մեզ, որտեղ ուզում է լարվածությունը տեղափոխվի, մենք պատրաստ ենք ցանկացած պայմաններում հակահարված տալ թշնամուն: Ես Ձեզ ասել եմ, որ մենք միշտ էլ պատերազմի մեջ ենք, ու եթե պահը եկել՝ հասունացել է, մենք պատրաստ ենք: Թե չէ՞ ո՞ւր է պետք երկարատես պատերազմ. ավելի լավ է միանգամից թուրքի հարցերը լուծենք, վերջացնենք:

«ՄԻՆՉԵՎ ՎԵՐՋԻՆ ՓԱՄՓՈՒՇՏԸ ԿԿՈՎԵՍ»

Օրերս հայտնի դարձավ, որ ՌԳ-ն հայ-թուրքական սահմանի վրա զորքեր է ավելացնելու...

- Ուրախ չե՞ք, որ նման որոշում կա: Ինչքան շատ ավելացնեն, էդքան մեր օգուտն է, ինչքան գեներ ու տեխնիկա բերեն սահման, էդքան մեզ լավ: Լավ իմացեք, եթե ռուսը չլինի, հիմա թուրքիան մեզ երեսի հոշոտել էր: Մենք միշտ ամեն ինչի պատրաստ պետք է լինենք. կլինի թուրքիա, կլինի Ադրբեջան,



ով ուզում է լինի, մենք մեր պատմությունը կռվով պետք է պահենք: Էդպես է եղել առաջ ու էդպես կլինի հիմա: Յայն երբեք չի գնա թուրքի դեմ ծնկի գա: Թող թուրքը լավ իմանա՝ Հայաստանը միշտ պատրաստ է պայքարելու ու առաջ գնալու, կռվելու ենք մինչեւ վերջ: Պետք է ու պարտավոր ենք պայքարել, ուրիշ ձեւ չունենք: Առաջ, որ նստել լացել են, ու թուրքը եկել, կոտորել է, էդ լավ էր: Անձամբ ես մինչեւ վերջին փամփուշտը կկրվեմ, թող մեռնեմ: Ինչ է եղել, բայց թույլ չեմ տա թուրքը անի էն, ինչ արեց 1915 թվին: Ճիշտ է, ասում են՝ պատերազմում ոչ ոք չի հաղթում, բայց որ մենք առաջադիմություն կունենանք, հաստատ իմացեք:

Ամեն դեպքում սպասենք՝ ժամանակը ցույց կտա: Հիմա շտապել պետք չէ, քանի որ չենք իմանում Ռուսաստանի դիրքորոշումը: Բայց, որ ռուսը մտավ պատերազմի մեջ, մենք ինքնըստինքյան կլինենք պատերազմի դաշտում. դա հաստատ:

ԻԼՈՆԱ ԱՋԱՐՅԱԼ

ԱՐՏԱՔԻՆ

ՊՈՒՏԻՆ-ՕՐԲԱՍԱ ԱՅՍ ՎԵՐՋԻՆ ԶԱՆԴԻՊՈՒՄՆ Է՛Լ ՆՈՐ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԿՏԱՆԻ

Օբամա-Պուտին երկրորդ համաշխարհային պատերազմի 16-ին երկարամյակի: Այս հանդիպման հենց հաջորդ օրն էր, որ ՌԳ նախագահը A321-ի դեպքում ընդունեց որպես ահաբեկչություն կտրուկ պնդելով Սիրիայում այն համեմատաբար չափավոր օդային հարձակումները միաժամանակ թիրախի տակ առնելով ԻՊՊ-ի կողմից նավթի ապօրինի արդյունահանումն ու արտահանումը: Դրան էլ հաջորդեց թուրքերի կողմից ռուսական ՍՈՒ-24-ի վրա հարձակումը, Սիրիայում ռուսական C-400-ների եւ որոշ այլ ժամանակակից զինտեխնիկայի կենտրոնացումը:

Հաշվի առնելով այն փաստը, որ աշխարհաքաղաքականության «բարձրագույն լիգայում», առավելապես դրա ամենավերին հորիզոնականներում տեղ գտած ռուս-ամերիկյան հարաբերություններում, ավելի ճիշտ՝ հակամարտությունում հենց այնպես ոչինչ չի լինում, Պուտին-Օբամա հանդիպումների ներկայացված ժամանակագրությունից այս պատկերն է առաջանում: Հանդիպում են, սիրիական հարցի, ավելի կոնկրետ՝ Մերձավոր Արևելքի քաղաքական ճակատագրի եւ, վերջնարդյունքում, ռուս-ամերիկյան աշխարհաքաղաքական բախանի շուրջ լեզու չեն գտնում, դրան հաջորդում է կոշտ հարվածների փոխանակում, ապա էլի են հանդիպում, լեզու չեն գտնում, ապա՝ ավելի կոշտ հարվածներ փոխանակում... Եթե այս տրամաբանությունն է, ապա այն հարցն է օրակարգ գալիս, թե այս երրորդ հանդիպումը...

ման ժամանակ լեզու գտա՞ն, թե պետք է սպասել շատ ավելի կոշտ նոր հարվածների:

Այսպիսով՝ Պուտին-Օբամա այս վերջին հանդիպումն ի՞նչ արդյունք ունեցավ: Տեղեկատվությունն այս անգամ էլ իմաստակարամ փակ է: Իսկ ըստ կցկտուր պաշտոնական տվյալների՝ Օբաման մնում է իր ասածին՝ Բաշար Ասադը պետք է հեռանա: Դրան զուգահեռ հնչեց նաեւ Պետքարտուղարության պաշտոնական ներկայացուցիչ Էլիզաբեթ Տրյուբոյի այն խոսքը, որ ռուսական ՍՈՒ-24-ը խախտել է թուրքիայի օդային տարածքը: Ավելին՝ Պետքարտուղարության ներկայացուցիչը ցուցադրաբար չփորձեց էլ մոտենալ հարցին, որ եթե անգամ ռուսական ինքնաթիռը հասել է թուրքական սահմանը, ապա թուրքական, թե սիրիական երկրները թուրքերը գործեցին նրա վրա: Մինչդեռ, եթե անգամ ՍՈՒ-24-ը հասել էր սահմանը եւ հեռացել թուրքիայից, ապա բոլոր միջազգային օրենքներով թուրքական ինքնաթիռը ոչ մի իրավունք չունի այլ երկրի տարածք մտնել եւ հրթիռ արձակել. սահման խախտել, եւ հեռանալու դեպքում ԱՄՆ-ից այլ իրավունքներ ունենալ, ասե՛նք դիմել միջազգային դատարան, իր գործընկեր ՆԱՏՕ-ին, մինչեւ փակ պատերազմ հայտարարել Ռուսաստանին, բայց ոչ երբեք բոլորովին այլ սուվերեն, ՄԱԿ-ի անդամ պետության սահմանն անցնել, որն արդեն ազդեցիկ է այդ նույն պետության նկատմամբ: Եվ այս իրավիճակում, երբ Պետքարտուղարությունը, թուրքական ինքնաթիռի գործողությունները մի կողմ թողնելով, կարծիք է հայտնում միայն առնվազն կասկածելի սահմանափակումներ մասին, ապա դա արդեն նշանակում է, որ Վաշինգտոնը վերջնականապես է արդարացում ԱՄՆ-ի կողմից: Առավել եւս, որ, զրեթե, միաժամանակ նույն միանշանակ գնահատականը հնչեցրեց նաեւ ՆԱՏՕ-ն, թեւ ռուսներն արդենիս այդ կազմակերպությանը ներկայացրել են ՍՈՒ-24-ի թռիչքային բոլոր տվյալները, որոնք ստուգելը շատ հեշտ է:

Այս ամենը հուշում է, որ նաեւ Պուտին-Օբամա վերջին հանդիպման արդյունքներից էլ մեկն էլ Վաշինգտոնը գնում է Մոսկվայի հետ հարաբերությունների սրացման: Եվ մյուս կողմից էլ՝ Օբամայի հետ հանդիպումից հետո Վ.Պուտինը հայտարարեց. «**Մենք տեղեկատվություն ունենք, որ թուրքիայի նախագահը չի ընդունել այդ որոշումը** (ՍՈՒ-24-ի ճեղ): Բայց դա մեզ համար նշանակու-

թյուն չունի»: Այդ դեպքում ո՞վ է ընդունել.

կարելի է կռահել, թե ակնարկն ուր է տանում: Բացի այդ՝ Մոսկվայում նույն պահին օրինակ հայտարարելով Ռուսաստանում ամերիկյան «գունավոր հեղափոխությունների» հիմնական գործիքներից մեկի՝ Սորոսի հիմնադրամի տարաբնույթ կառույցների գործունեությունն արգելելու մասին, իր հերթին է ակնարկում, որ Վաշինգտոնի հետ ընդհանուր լեզու չի գտել:

ՈԱԶՄԱԿԱՆ ՍՐԱՇՈՒՄՆԵՐԸ ԶԱՅԱՍՏԱՆԻՆ ԶՆԻ ԶԱՆԻ

Այսպիսով՝ պետք է սպասել, որ այս երրորդ հանդիպումից հետո նոր էլ ավելի ծանր ցնցումներ են լինելու: Հավանականությունը մեծ է: Բայց ասել, թե բանը կարող է արդեն հասնել ռուս-ամերիկյան ուղղակի բախումների, միանություն կլինի. միջուկային զսպաշապիկը երկուսին էլ անգամ ցանկության դեպքում զրկում է ուղղակի բախումից: Ավելի հավանական է, որ Վաշինգտոնը դեռ կփորձի միջորոգավորված հարվածներ հասցնել, եւ դրա համար, թեւ մի կողմից շարունակում է ակտիվորեն տեխնիկա մատակարարել արեւելաեվրոպական որոշ երկրների, բայց թուրքիան է մնում ամենահարմար մասիկը: Վերջին հաշվով՝ բախման հիմնական ուղղությունը մնում է Սիրիան, թեւ չբացառելով, որ այս երրորդ հանդիպումից հետո Վաշինգտոնը կփորձի կտրուկ ակտիվացնել նաեւ ուկրաինական խաղաքարը:

Այս իրավիճակում է օրերս տարածված այն խոսակցությունները, որ ՌԳ-ն ցանկանում է արագորեն մեծացնել (միայն թվականը մինչեւ երկուսուկես անգամ) հայաստանյան 102-րդ ռազմաբազայի ուժերը, իր տրամաբանությունն է ստանում: Ի վերջո, եւս մեկ անգամ հիշեցնենք, որ Հայաստանը միակ սահմանն է, որտեղ թուրքական եւ ռուսական զինուժը դեմադրեն են կանգնած: Բախում, ամենայն հավանականությամբ, տեղի չի կարող ունենալ, քանի որ դրան միանգամից կհաջորդի նաեւ ՌԳ-ՆԱՏՕ բախումը՝ դրանից բխող հիշատակված միջուկային հետեւանքներով հանդերձ: Չնայած մեր արեւմտամետ աղբյուրներն արդենիս բայաթին կապել են, թե ինչո՞ւ կապվեցին ռուսների հետ, բա որ հիմա պատերազմի մեջ ընկնենք: Եվ, իհարկե, չեն էլ ուզում տեսնել, որ եթե ողջ դարաբաղյան պատերազմի

ընթացքում, եւ դրանից հետո թուրքիան Հայաստանի ուղղությամբ պատերազմ չի սկսել, միայն այն պատճառով, որ ռուսական բանակն է նրանց դեմ կանգնած:

Դարաբաղյան ուղղությամբ եւս զոնե այս պահին ռազմական սրացումների հավանականությունը մնում է փոքր: Հաշվի առնելով, որ նախ թուրքիայի ԱԳ նախարարի Բաբոն այցելության ընթացքում Ալիեւը վերջնականապես փաստեց, որ թուրքերն իրենց լավագույն բարեկամներն են մնում: Եվ դրանից հետո՝ դարաբաղյան նոր պատերազմ սկսելով՝ Ալիեւն արդեն պետք է նախ նկատի ունենա այս օրերին Ադրբեջանում գնալով ծավալվող ազգամիջյան ցնցումները, որոնք նաեւ ակնհայտ միջկրոնական տեսք են ստացել, եւ Իրանն էլ ուշադրությունը հետևելու է դեպքերի ընթացքին: Բացի այդ՝ Ալիեւը պետք է նաեւ չնոռանա, որ ի տարբերություն թուրքիայի Ադրբեջանը ՆԱՏՕ-ի կազմում չէ, եւ այն միջուկային հեռանկարներն այս դեպքում չկան: Ինչպես նաեւ, որ թուրքիան, եթե փորձի միջամտել, ապա արդեն ՆԱՏՕ-ի պաշտպանական մեխանիզմները նրա նկատմամբ չեն գործելու:

Մի խոսքով՝ ռուսական 102-րդ ռազմաբազային խումբը, թեւեւ, նորից պետք է սիրիական հատվածում սպասել, հաշվի առնելով, որ մի շարք պետություններ արդենիս խոսում են նաեւ ցանաքային ուժերի կենտրոնացման մասին, որն, անշուշտ՝ որոշ այլ պետությունների համարժեք ռեակցիային է հանգեցնելու:

Ի դեպ, երկու ամիս առաջ, երբ ռուսները նոր էին սկսում թռիչքները Սիրիայում, առիթ ունեցանք կարծիք հայտնել, որ արագորեն մեկ ամսում ԻՊՊ-ի խնդիրը չլուծվելու դեպքում ԱՄՆ-ը հակազդեցության մեխանիզմներ կկարողանա գործադրել: Մինչդեռ այն պահին մի 50 հազարանոց օդային դեսանտը միանգամից Սիրիա-Իրաքում իրավիճակը կտաներ արագ հանգուցալուծման: Այս մեխանիզմը, թեւեւ, այսօր եւս մնում է արդիական:

ՔԵՐՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ռուս-թուրքական պատերազմները	
Տարեթիվը	Հաղթող կողմը
1568-1570	Ռուսաստան
1672-1681	Թուրքիա
1686-1700	Ռուսաստան
1710-1711(13)	Թուրքիա
1735-1739	Ստատուս քվո
1768-1774	Ռուսաստան
1787-1791	Ռուսաստան
1806-1812	Ռուսաստան
1828-1829	Ռուսաստան
1853-1856	Ստատուս քվո
1877-1878	Ռուսաստան
1914-1918	Առաջին աշխարհամարտի արդյունքներով

ՉՈՐԱԿՈՉԻ ՅԱՐՑՈՒՄ ՍԻՐԻԱՅԱՅ ԶՅ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՉՈՒՆԵՆ

Սկսած 20 15 թվականի նոյեմբերից մինչև 20 16 թվականի հունվար ամիսները կանցկացվեն մինչև 20 15 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ 18 օրվա լրացած փողների պարտադիր գինվորական եւ այլընտրանքային ծառայությունների ձմեռային զորակոչը: Կզորակոչվեն նաեւ Յայաստանի այն քաղաքացիները, որոնց նախկինում փրկված պարտադիր գինվորական ծառայության զորակոչից փարկեման իրավունքը դադարել է մինչև 20 15 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ: Զեկ ձմեռային զորակոչին էլ նվիրված էր «Իրավունք» հեռուստահաղորդումը «Ուղի կապ»-ը, որի ընթացքում ԶՅ քաղաքացիների հարցերին պատասխանեց ԶՅ ՊՆ իրավաբանական վարչության պետի տեղակալ, գեղապետ ՍԱՍՈՒՆ ՍԻՄՈՆՅԱՆԸ:

ԱՅԼԵՆՏՐԱՆՔԱՑԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԶԱՅՏՆՈՂ ԴԵՈ ԶԿԱ

Ինչ ստել է այլընտրանքային ծառայություն եւ, ընդհանրապես, կամ այդպիսի ծառայություն անցնող զինվորներ (ԶԱՍԻԿ ՄՈՒՇԵՂՅԱՆ):

Այս պահին այլընտրանքային ծառայության երկու տեսակ կա՝ զինվորական եւ աշխատանքային: Առ այսօր ունենք այլընտրանքային աշխատանքային ծառայողներ, բայց այլընտրանքային զինվորական ծառայություն անցնելու ցանկություն հայտնող քաղաքացիներ դեռեւս չկան: Վերադառնալով հարցի առաջին մասին՝ նշեմ, որ այլընտրանքային ծառայությունն ընդհանրապես եւ աշխատանքային ծառայությունը մասնավորապես, կապված չէ գեներլիտով, օգտագործելու եւ զինվորական վերահսկողության տակ գտնվող կառույցում ծառայություն իրականացնելու հետ: Ներկայումս այլընտրանքային աշխատանքային ծառայությունն իրականացվում է Առողջապահության ու Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունների համակարգում, ինչպես նաեւ համայնքներում՝ համայնքային ծառայության մեջ ներգրավվելով որպես որոշակի աշխատանքների կատարում: Բանվոր-ծառայողի, սանիտարի եւ այլն (աշխատանքների ցանկը սահմանված է կառավարության համապատասխան որոշմամբ):

Իսկ ինչպե՞ս է որոշվում, թե ով կարող է անցնել այլընտրանքային ծառայության:

Քաղաքացու դիմումի համաձայն: Որոշակի պայմանն այն է, որ տվյալ քաղաքացու կրթական հանձնարարությունները հակասի գեներլիտը, պահելն ու օգտագործելը: Դրա համար ստեղծվել է միջգերատեսչական հանձնաժողով, որը գլխավորում է Տարածքային կառավարման եւ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալը: Այս հանձնաժողովը քննարկում է դիմումներն ու կայացնում որոշում: Ի տարբերություն զինվորական ծառայության՝ այլընտրանքային ծառայություն ավելի երկար ժամկետներ է նախատեսում: Այլընտրանքային աշխատանքային ծառայությունը 36 ամիս ժամկետով է իրականացվում, իսկ այլընտրանքային զինվորական ծառայությունը՝ 30 ամիս ժամկետով:

Ո՛՛Կ ԿՎՐՈՂ Է ՕԳՏԿԵԼ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՅՐԻՆ ՄՈՏ ԾԱՌԱՅԵԼՈՒ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Օտարների երկու անդամները 3-րդ կարգի հաշմանդամներ են, իսկ զորակոչից տան միակ երեխան է: Արդյոք տղան կարող է ծառայություն անցնել քնակավայրից ոչ ավել, քան 100 կմ հեռավորության վրա (ՍԱՍԿԵԼ ՍՏԵՓԱՆՅԱՆ):

Օրենքը չի նախատեսում նման իրավունք, եւ տվյալ քաղաքացին բնականության վայրին մոտ ծառայելու արտոնություն չունի: Խնդիրը կարգավորվում է «Ձիմապարտության մասին» ԶՅ օրենքի 11-րդ հոդվածի 7-րդ մասով, որտեղ սահմանվում է, թե քանի կիլոմետր հեռավորություն է համարվում քնակավայրից համաձայն՝ դա մինչեւ 150 կմ է, եւ նաեւ համապատասխան արտոնություններ ունեցող զորակոչիկներն էլ ծառայություն են նշանակվում վիճակահանությանը: համապատասխան կարգավիճակ ունեցող անձանց միջեւ է վիճակահանությունն իրականացվում: Իսկ բնականության վայրին մոտ ծառայելու արտոնությունից կարող է օգտվել միայնակ 3-րդ խմբի կամ տարիքային կենսաբոլորական ծնողի միակ երեխան, կամ որը չունի չափազանց քույր կամ եղբայր, ինչպես եւ այն զորակոչիկը, որը զինվորական ծառայության ընթացքում կամ պաշտպանության ժամանակ զոհված կամ մահացած քույր, եղբայր, հայր կամ մայր ունի, սակայն ընտանիքի միակ արու զավակը չէ: Իսկ եթե միակ արու զավակն է, ապա նրան տրվում է ծառայությունից ազատման իրավունք: Բնականության վայրին մոտ ծառայելու իրավունքից օգտվում են նաեւ երկկողմանի ծնողազուրկ զորակոչիկները:

Իսկ եթե ծնողները 3-րդ կարգի հաշմանդամ են, բայց ոչ հայրը, ոչ մայրը չեն աշխատում, իսկ որդուն տանում են քանակ, ինչ անի ըստակը (ԶՈՐԱԿՈՉԻԿԻ ՏԱՍԻԿ):

Երրորդ խումբ հաշմանդամություն ունեցող ծնողների միակ զավակի համար որդեկ արտոնություն չի տալիս օրենքը: Բայց օրենքով հնարավորություն է տրված ՊՆ նախարարին՝ անհատական որոշում կայացնել ծառայության վայրը որոշելու հարցում՝ ել-

նելով տվյալ զորակոչիկի ընտանիքի սոցիալական, ընտանեկան վիճակից: Ուստի՝ այս դեպքում խորհուրդ կտան նամակով դիմել նախարարին՝ ներկայացնելով ընտանիքի սոցիալական վիճակը:

ՍԻՐԻԱՅԱՅ ԶՅ ԲԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԶԱՄԱՐ ԼՐԱՅՈՒՑԻՉ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԶԿԱ

Ջորակոչի վերջին նորամուծություններից մեկը վիճակահանությունն է: Որքանով է այն արդարացում իրեն, չէ՞ որ հակառակ պարագայում հույսեր կային, որ այն զորակոչիկը, որի ֆիզիկական տվյալները չեն բավարարում, կարող էր համապատասխան ծառայության գնալ՝ համապատասխան վայրում (ՏԻԿԻՆ ԳՈՂՄԱՐ):

Ջորակոչային վիճակահանությունն այսօր իրեն լիովին արդարացրել է, եւ առաջին հերթին արդարության սկզբունքը հաշվի առնելով: Ինչ վերաբերում է առողջական վիճակի հետ կապված որոշակի սահմանափակումներին, սա նույնպես կարգավորված է: Նրանց համար սահմանված է ծառայության ընթացքում սահմանափակումներ, ինչպես նաեւ վայրերը, որոնք հակացուցված են տվյալ դեպքում որոշակի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկների համար: Այնպես որ, միանշանակ այս ամենը հաշվի է առնվում, այդ թվում՝ տվյալ օրվա վիճակահանությանը մասնակցելու հարցում:

Այն սիրահայտի համար, ովքեր 3-րդ քաղաքացի են դարձել, արդյոք գործում է որեւէ արտոնյալ պայման՝ ժամկետային զինվորական ծառայության անցնելու հարցում (ԱՐՓԻՆԵ ԶԱՐՈՒԹՅԱՆ):

Ոչ, սիրահայտ ԶՅ քաղաքացիների համար լրացուցիչ արտոնություն չկա, որովհետեւ խնդիրը կարգավորվում է Սահմանադրությամբ, որն ասում է՝ ԶՅ քաղաքացիները հավասար են անկախ ծագման կարգավիճակից: Սիրահայտի համար օրենքով նախատեսված է արտոնություն առողջական, ուսումնական, ընտանեկան ուղղություններով, բայց ծառայության անցնելու հետ կապված այսօրվա դրությամբ չի նախատեսվում որեւէ արտոնություն:

ԵՐԵ ԶՈՐԱԿՈՉԻԿԸ ԿՎՐՈՂ Է ԻՐԱԿԱՆԱՅԵԼ ՄԱՐՏԱԿԱՆ ԶԵՐԹԱՎԱՅՈՒԹՅՈՒՆ

Եթե երիտասարդը պետք է մեկ ամսից զորակոչվի, եւ նրա մոտ խոր առաջ եկած առողջական խնդիրներ են նկատվում, ծնողն իրավունք ունի՞ լրացուցիչ բուժօգնում պահանջելու՝ հետագա բարդություններից խուսափելու համար (ՇՈՒՇԵՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ):



Զայտարաված զորակոչի մինչեւ վերջին օրն էլ զորակոչիկը փորձաքննության ենթակա է ցանկացած հիվանդության դեպքում, որն ի հայտ կգա, կամ որի մասին նա կբարձրաձայնի: Ձիմկոնստարիատներում գործում են բժշկական հանձնաժողովներ, որոնք այդ պահին իրականացնում են փորձաքննությունը, նայում են անչափահաս տարիքից եղած բժշկական փաստաթղթերը, բժշկական պոլիկլինիկաներում տրվող գրքուկը: Նույնիսկ պատահել է, որ շատ զորակոչիկներ իրենց առողջական ինչ-որ մի խնդրի մասին իմացել են բուն զորակոչի շրջանակներում՝ բժշկական փորձաքննության արդյունքների հիման վրա: Եվ եթե խորացված հետազոտության կարիք կա, ապա զորակոչիկին տեղական բժշկական հանձնաժողովն ուղարկվում է համապատասխան բժշկական մասնագիտացված հաստատություններ:

Նորակոչիկների ծնողները առաջին հերթին մտավայություն ունեն, որ իրենց անփորձ որդին սահման է պահելու: Կրթությանը այն, որ որեւէ նորակոչիկ ծառայություն անցնելու պես՝ մեկ-երկու շաբաթվա ընթացքում չի դառնա ինչ սահմանի ծառայություն իրականացնող զինվոր (ՏԱՅԿ ԶԱՐՈՒԹՅԱՆ):

Միանշանակ, որովհետեւ սա կանոնակարգված է օրենքով: Բանի դեռ զորակոչիկը զինվորական երդում չի տվել եւ չի անցել երիտասարդ մարտիկի պատրաստման ծրագիր, նրա կողմից չի կարող իրականացվել մարտական հերթապահություն: Երիտասարդ մարտիկի պատրաստության ծրագիրը մոտ 30-40 օր է տևում, եւ այն անցնելուց հետո միայն զինծառայողները զինվորական երդում են ընդունում, նրանց կցվում է համապատասխան պաշտոնների: Կրկնում են՝ բացառվում է, որ մինչեւ երիտասարդ մարտիկի ծրագիրն անցնելը, որեւէ նորակոչիկ ներգրավվի մարտական հերթապահության:

ԳՐԱՏ ՄԱՐՏԱՅԱՆ

ԹՈՒՐԱԿԱՆ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐ «ՌԴ-Ն, ԹՈՒՐԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՆԵՐԿՐՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՎ, ՄԵՋ ԶԱՄԱՐ ԼԱՎ ԶՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՍՏԵՂԾՈՒՄ»



ՌԿ կառավարությունն արգելել է առեցցված մսի եւ մսամթերքի, թռչնամսի, կաթի եւ կաթնամթերքի, ձկան, պրոլո-բանջարեղենի, կանաչու եւ մի շարք այլ մթերքների ներմուծումը Թուրքիայից: ՌԿ նախագահ Վլադիմիր Պուտինի հրամանակով համաձայն՝ ՌԿ կառավարությունը հաստատել է նաեւ այն պրևենտիվ գործունեությունը, որոնցով թուրքական ընկերությունները Ռուսաստանում զբաղվել չեն կարողանա:

Նկատելի է, որ ՌԿ ներմուծել արգելվող մի շարք այլաբնույթի շաբաթային եւ արտադրում է պրոլո-բանջարեղեն, ձկնամթերք եւ այլն: Այսինքն՝ կկարողանան օգտվել այս իրավիճակից: Այս հարցի պատասխանը փորձեցինք ստանալ ԶՅ գյուղատնտեսության նախարարի տեղակալ ԳԱՐՆԻԿ ԳԵՏՐՈՒՅԱՆԻ հետ մեր զրույցում:

Ռուսական շուկան մեզ համար առաջնային եւ կարեւոր շուկա է: Այս տարի մենք արդենիսկ օգտագործելով մեր ունեցած հնարավորությունները, զգալի արդյունքների ենք հասել: Եվ դա է պատճառը, որ անցյալ տարվա համեմատ շուրջ 70 տոկոսով ավելացել են արտահանումների ծավալները: այսօրվա դրությամբ շուրջ 71 հազար տոննա պտուղ-բանջարեղեն է արտահանվել, որի 84 տոկոսը ՌԿ: Այդ գործընթացը շարունակվում է. այս պահին արտահանվում է կաղամբ, ծաղկակաղամբ, խաղող, կանաչեղեն, խնձոր: Առաջիկայում նաեւ կարտոֆիլի արտահանումներ տեղի կունենան:

ՌԿ-ի՝ Թուրքիայի նկատմամբ կիրառվող սանկցիաները, բնականաբար, լրացուցիչ հնարավորություններ կտա հայկական ապրանքների արտահանման համար: Այս օրերին նախարարը համոզված է, որ կազ-

մակերպում արտահանողների հետ: Մասնավորապես՝ անցած ուրբաթ օրը համոզված ունեցավ մասնաբերքի եւ կաթնամթերքի արտադրության եւ վերամշակման գործով զբաղվող ընկերությունների հետ: Երեկ էլ հանդիպում տեղի ունեցավ պտուղ-բանջարեղեն արտահանողների հետ. քննարկվում են խնդիրները եւ առկա հնարավորությունները: Մենք տիրապետում ենք բոլոր տվյալներին, թե համարապետության որ մասում ինչ քանակությամբ պտուղ-բանջարեղեն, խաղող, կարտոֆիլ կա: Քննարկվում են բոլոր խնդիրները եւ հնարավորությունները, ու կարծում են, որ կկարողանանք նաեւ այդ լրացուցիչ հնարավորությունը եւս օգտագործելով՝ էլ ավելի մեծացնել արտահանումների ծավալները:

Պարոն Գետրոյան սասցիք, որ արտահանումների աճ ունեց: Բայց վարունգի, կաղամբի եւ որոշ այլ գյուղամթերքների իրացման



հետ կապված խնդիրների մասին գյուղացիները շարունակում են բարձրաձայնել: Ինչո՞ւ:

Անկեղծ ասած, չեն կարծում, որ մաս խնդիրներ հիմա կան: Դժվարություններ կային ամռան ամիսներին, որովհետեւ այդ պահին կար մասնավորապես վարունգի արտահանման հետ կապված խնդիրներ: Բայց, այնուամենայնիվ, պետք է նշեմ, որ վարունգի արտահանումն այս տարի մի քանի անգամ գերազանցել է նախորդ տարիների ցուցանիշը: Ինչ վերաբերում է կաղամբի արտահանումները, ապա այն այսօր էլ շարունակվում է, եւ այդ կապակցությամբ եւս կարելի է ասել խնդիր, որպես այդպիսին, գործնականում չկա: Չմեղվա ամիսներին էլ սպասվում է, որ կունենանք ջերմատնային բանջարեղենի ավելցուկ: Բայց այդ հարցում եւս որեւէ

դժվարություն չի լինի, քանի որ ռուսական շուկա թուրքական բանջարեղենի մատակարարման կրճատումը մեզ համար մոր հնարավորություն է ստեղծում արտահանելու համար: Այդպիսով՝ ՌԿ-ն թուրքական ապրանքների ներկրումն արգելելով, մեզ համար լավ հնարավորություններ է ստեղծում, որպեսզի արտահանվի կաթնամթերքը, պանիրը: Դրանց վրա սահմանափակումներ էին դրված, մինչդեռ մենք դեռեւս անցյալ տարվանից չի բացված բավականին քանակությամբ պանիր ունենք: Այդ պատճառով, կամ, օրինակ, ձկնեղենի արտահանման համար լայն հնարավորություններ են ստեղծվել այսօր:

Դեռ որքան պտուղ-բանջարեղեն կա, որը արտահանման համար է նախատեսված:

Այո, դեռ բավականին լուրջ քանակություններ ունենք արտահանելու. ավելի քան 30 հազար տոննա խաղող դրված են սառնարաններում՝ պահպանության, որի զգալի մասը արտահանվելու է: Արտահանման ենթակա կարտոֆիլի լուրջ քանակություններ կան, առաջիկա օրերին կսկսվի արտահանվել սեղանի ձակնդեղ, կաղամբ, զգալի: Մեծ քանակությամբ խնձոր է պահպանության դրվել սառնարաններում:

Կարծում են՝ արտահանումը կկայունացնի նաեւ մեր շուկայի գները եւ լուրջ եկամուտներ կապակցվի հերձարայտության, արտահանողների եւ գյուղացիության համար:

ԻԼՆԱ ԱԶԱՐՅԱՆ

ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆ. «ԿԱԽ ԳԼԽՈՎ ԶՆԱՐԱՎՈՐ ԶԷ ԵՐԿԻՐ ԿԱՌՈՒՅ ԵԼ ՈՒ ՊԱՏԵՐԱԶՄ ԶԱՂԹԵԼ»

Այս փորձի լրացավ հայ արձակագիր, դրամատուրգ, հրապարակախոս, սցենարիստ, ռեժիսոր, խմբագիր և գեղանկարիչ ԱՂԱՍԻ ԱՅՎԱԶՅԱՆԻ 90-ամյակը: Տարին ավարտվում է, սակայն մշակութային փարբեր հասարակություններում դեռևս շարունակում են նշել մեծ արվեստագետի հոբելյանը: Երեկ Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտի «Ուսանողական թատրոնում» ես հուշ-ցերեկոյին՝ բեմականացված փարբերակով հիշվեց ու մեծարվեց անվանի արվեստագետը՝ հայրենի դերասանների մատուցմամբ, որոնք ընդմիջում էին այլազանական ֆիլմերով: Ցուցադրվեց նաև Ա. Այվազյանի վերջին հարցազրույցներից մեկից փոքրիկ դրվագ, որպես մտորելով իր կյանքի ապրած փորձերի մասին՝ խորհուրդ է տալիս. «Ամեն մարդ պետք է ունենա իր անձնական սահմանադրությունն ու առաջնորդի հենց սեփական սահմանադրությամբ»:



վետական տարիներին թարգմանվում ու հրատարակվում էր: Խոստովանեմք՝ մեր ժամանակակից գրականության մեջ շատ չունենք այդպիսի հեղինակներ, որոնք, ըստ էության, մեր երկրի ու մշակույթի բանալին են դառնում՝ Հայաստանի սահմաններից դուրս»:

«ԱՅՌ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՎԵԼԻ ՈՂՈՂ ԷՐ ԶԱՅԼՈՒՄ, ԶԱՄ՝ ՍՈՎՈՐԱԲԱՐ»

Ըստ Գ. Մուրադյանի՝ Ա. Այվազյանը չէր կոտրվում ճուրղիկ ամենամեղ ու դժվարին օրերին. «90-ականներին, երբ շատերս ընկճված էինք, Աղասի Այվազյանը հակառակ էր, նա իր ամբողջ էությունը, կեցողությամբ, վարքագծով ու խոսքով հակադրվում էր այդ ընկճվածությանը: Զարմանալիորեն՝ նա այդ տարիներին ավելի ուղիղ էր քայլում, քան՝ սովորաբար: Նա դրանով ուզում էր, որ հայերը հասկանան՝ իրենք երկիր սկսելու պատմական ու պետություն կառուցելու հնարավորություն առջև են՝ այս պահին գոյամարտի մեջ են, և կախ զխտվ հնարավոր չէ երկիր կառուցել ու պատերազմ հարթել: Ուստի, նա բարձր գլխով քայլում էր երեսամի փողոցներով, սիրում էր Գյուլիստանի պողոտայով ման գալ: Գուցե մենք շատ բան հավանեցինք կամ չհավանեցինք Գյուլիստանի պողոտայում, բայց ինքը լավ էր զգում, ասում էր՝ 21-րդ դարի Հայաստան ենք կառուցում»:

«ԱՅՌԴԵՍ ՃԱՆԱՊԱՐԴԻՆ ՈՐՈՍՈՒՄ, ՏԱՆՈՒՄ ԷՐ ԶԱՅՑԻՆԱԿԱՆՆԵՐԻՆ»

Րուշ-երեկոյի ավարտին թատրոնի և կինոյի ինստիտուտի ղեկավար, կինոգետ ՂԱՎԻՐ ՍՈՒՐԱԶՅԱՆԸ ակամա տասնյակ տարիներ հետ գնալով՝ մտաբերեց մի քանի հետաքրքիր դրվագներ. «Դե-



պի «Հայֆիլմ» տանող ճեմուղու վրա կանգնած՝ «Հայֆիլմի» երթուղայինն էինք սպասում, որը միշտ լցված էր գալիս: Մեկ էլ հանկարծ, կանգնում էր զազարագուն մի «Ժի-գուլի»՝ թեթև, փոքրիկ, համեստ աշխատավոր իշուկ, որի պատուհանից Աղասի Այվազյանը հանում էր մորուքը ու ասում՝ նստեք:

Այդպես Աղասին ճանապարհին որսում տանում էր հայֆիլմականներին: Մեկ-մեկ այդ մեքենայի մեջ Հեղինակներ էր լինում, մեկ-մեկ էլ՝ Լեւոն Աբրահամյանը: Այդպես ասել-խոսելով գնում էինք «Հայֆիլմ»,- հիշեց Մուրադյանն ու հարատուրեն շարունակեց. «Իսկապես, այդ իմաստով մեր սերնդի բախտը բերեց՝ մենք եկանք կինո, գրականություն, և մեր շուրջը շքեղ, հարուստ անհատականություններ էին, որոնք այն ժամանակ շատ ավելի երիտասարդ էին, քան՝ ես հիմա: Հեղինակ Մալյանն էր, Հրանտ Մաթևոսյանը, Ֆրունզե Դովլաթյանը, Աղասի Այվազյանը, Տիգրան Մանուկյանը... Այս բոլորը «Հայֆիլմի» կյանքն էր, ու, փառք Աստուծո, որ զուգահեռակց մեր երիտասարդությունն ու պատանեկությանը, մենք դրանցով սկսեցինք ճանաչել արվեստը և սիրելը»:

«ԱՄԵՆԱՇԱՏ ԹԱՐԳԱՆՎԱՅ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻՑ ՄԵՎ ԷՐ»

Մուրադյանը նաև Ա. Այվազյանին համեմատեց Դոն Կիխոտի հետ. «Ամբողջ գրական և գեղարվեստական միջավայրում Աղասի Այվազյանը շատ էր տարբերվում, միշտ ինչ-որ Դոն Կիխոտին հիշեցնող բան կար իր քայլվածքի մեջ: Նա անընդհատ ինչ-որ տազանապ, անհանգստություն ուներ և աշխարհը փոխելու ցանկություն: Նա միշտ ձգողական էր երիտասարդ գրողների համար, բայց նաև հեռավորություն էր պահպանում, շատ չէր կարող մոտենալ», - հիշեց Մուրադյանն ու հավելեց՝ Ա. Այվազյանն էր, որ 60-70-ականների գրականությունը հայկական դարձրեց. «Նա բազմաթիվ լեզուներով ամենաշատ թարգմանված հայ գրողներից մեկն էր, ով դեռևս սո-

ԱՍՈՒՍՆՈՒ ԱՎԱՏԵՍՈՒԹՅԱՄ ԿԱՐԱՎԿԱՄ՝ ՇԱՐՈՒՆԱԿԵՑ

Հատկանշական է, որ Ա. Այվազյանի այրին՝ ԳՐԵՏԱ ՎԵՐԳՅԱՆԸ էլ, կարծես ամուսնու լավատեսությամբ վարակված՝ շարունակեց Գ. Մուրադյանի խոսքը. «Այսօր, երբ ժամանակները համգիստ չեն, Հայաստանում էլ՝ տարբեր տարի ամեն ինչ համգիստ չէ, ու շատ մարդիկ, հատկապես մեծերը, բողոքում են, թե ինչքան վատ է մեզ մոտ, ուստի ուզում են ընդգծել՝ այսօր ամեն ինչ շատ լավ է, պարզապես կարելու է տեսնել և զգալ, թե ով է կողքինը»:

«ՃԵՂՔՎՈՂ ԼՈՒՈՒԹՅՈՒՆ» ԿԱՐՏԱՅՈՒՅՑԻ ՏԱՐԻՆԵՐԻ «ԼՈՒՈՒԹՅՈՒՆ»

«ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԸ 90-ԱՎԱՆՆԵՐԻՆ ԶՄԵՌԱՎ»

Դեկտեմբերի 7-ին կլրանա երկրաշարժի զոհերի 27-րդ փարելիցը, այդ օրերին շարքերն իրենց գործունեությամբ կանդիդատան հայության այս ցավոք էջին: Հեղինակ-կարգադրող ՌՈՒԲԵՆ ԶԱՄԱՆՅԱՆԸ էլ երկար փորձեր կուտակած իր «լուռությունը» կարգադրաբար «Ճեղքվող լուռություն» խորագրով մենահամերգով:

«Իրավունք» հետ գրույցում Ռ. Զամյանը խոսեց մենահամերգի մանրամասներից, մշեց. «Համերգը, ըստ էության, ոչ ուղիղ իմաստով, այլ համազգային ցավի կոնտեստում, կապ ունի նաև 1988 թվականի Սախտակի երկրաշարժի հետ, ես արա համար է, որ օրը հենց դեկտեմբերի 7-ն է ընտրված: Մենահամերգն իմ անհատական ստեղծագործությունների ներկայացումն է լինելու. ընդգրկված են այնպիսի երգեր, որոնցում կա ըմբոստություն, բողոք և անարդարության առջև չընկրկելու միտում: Զգիտեմ՝ ինչու են ընդգծում այս բնական վիճակը, չէ՞ որ տարօրինակ կլինեք, եթե տրամագծորեն հակառակը լինեք հեղինակ-կատարողի հոգեվիճակը: Այդ, բոլոր դեպքերում, հարմարվողական չլինելը՝ անկախ զբաղմունքից, տեսակ է, գուցե իդեալիստի մի տեսակ, որ իմ դեպքում դրսևորվել է հեղինակային երգի մեջ».- շեշտեց հեղինակ-կատարողն ու մանրամասնեց մենահամերգի ընտրված խորագիրը. «Այլուբային ձեռագրվող մենահամերգներ շատ են ունեցել: «Ճեղքվող լուռություն» վերնագրված մենահամերգը համեմատաբար մեծ լսարանին խոսքս հղելու առաջին փորձն է: Խորագրի շուրջ բուն քննարկումներ եղան. մի օր էլ պոետ ընկերներիցս մեկն առաջարկեց «Ճեղքվող լուռություն» խորագիրը՝ այն բխեցնելով իմ երգերից մեկի տողերից՝ ձեռակերպման առումով որոշ փոփոխության ենթարկելով: Ընթացիկ քննարկումներն ու կարծիքներն էլ ապացուցեցին, որ նաև բովանդակային իմաստով է միշտ այս խորագիրը: Այսինքն՝ մինչ այս «պահված» լուռությունը եւ տարածական, եւ խորքային ասելիք ունի, իսկ ասելիքի կուտակումը շարունակություն է ենթարկում: Այլա-

պես, երբ ամեն ինչ փակում ես շրջանակի մեջ, մի տեսակ դառնում է ոչ մեկինը...»:

«ԿՊԱ ԺԱՄԱՆԱԿ՝ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳՆ ԷՆ ԿՈՒՆԵՆԱ ՄԵՇ ԼՍԱՐԱՆ»

Չրուցակիցն անդրադառնալով հեղինակային երգի նախկին և ներկա վիճակին՝ փաստեց. «Եթե 90-ականներին որեւէ մեկն ասեր, որ հեղինակային երգը կունենա մշտական 60 հոգանոց լսարան, միգուցե թերահավատ գտնվելի: Բայց հիմա սա փաստ է, որի հետ մենք՝ հեղինակ-կատարողներս, հաշվի ենք նստում՝ ասելիքի այս տեսակն ավելի խորքային դարձնելու և համարյա մեծանուն իմաստով: Ուստի, արդարացված հույս կա, որ կգա ժամանակ՝ հեղինակային երգն էլ կունենա մեծ լսարան: Արձանագրեմք, որ նախկինում մարդիկ հեղինակային երգերի կատարող գիտեին միայն Ռուբեն Հախվերդյանին: Շնորհիվ վախճանազ Հարությունյանի, շատ հեղինակ-կատարողներ հնարավորություն ստացան ներկայանալ հանրությանը: Եվ շատ հարցերում մենք պարտական ենք նրան, որ հեղինակային երգը 90-ականներին չմեռավ՝ գոյատևեց, արվեց ու, փառք Աստուծո, զարգացավ»:

ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԵՐԳԸ ԳՐՈՒՄ ԵՆ ՄՏԱՅՈՂ ՄԱՐԴԻԿ՝ ՄՏԱՅՈՂ ՄԱՐԴԻԿՆՑ ԶԱՄԱՐ

Ըստ Ռ. Զամյանի՝ ընդունված խոսք կա՝ հեղինակային երգը գրում են մտածող մարդիկ՝ մտածող մարդկանց համար. «Հեղինակային երգով մեծ դաժնիքներ լցվելը, այն էլ՝ մենահամերգով, բավականին դժվար է: Լրատվամիջոցներն էլ իրենց հերթին, սովորաբար ուշարություն են դարձնում հեղինակ-



iravunk.com
Ամբողջությամբ կարդացեք կայքում:

կային երգին և իրենց հզոր գեներն չեն օգտագործում այն հանրայնացնելու համար՝ արդարանալով, թե ներկայացնում են պահանջարկը: Սակայն այս արդարացումը սխալ է. ոչ թե ժողովուրդը, այլ ունակ անհատներն ու արվեստագետները պետք է ճաշակ թելարեն: Ինչեւէ՝ «ես պարտությունից էլ չեմ խուսափում, եթե հետեւից մոր կոչ կա», - սա իմ երգերից մեկի տողերն են: Հայրենասեր կոչվելու համար տիեզերական ինչ-որ բան պետք չէ անել, կարող ես պարզապես բարեխղճորեն կատարել առօրյա աշխատանքը և լինել ոչ պակաս հայրենասեր, քան խրամատուն կանգնած զինվորը: Բոլորս մեր տեղում բարեխղճորեն պետք է կատարենք այն, ինչին կոչված ենք: Այս ամենին անդրադառնում եմ նաև իմ երգերում: Հույս ունեմ, որ հանրիսատեսը համերգից հետո գոնե տասը րոպե մտածելու բան կունենա»:

Ձրուցեց ԶԱՄԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄՇԱԿՈՒԹՅՈՒՆ ԽՈՐԱՆՈՑ

«ՇՈՒՆՉ» ՖԻԼՄ ԱՄԵՆ ՄԻ ԱՆԱՐԺԱՆԻ ԶԱՄԱՐ ԶԷ

«Օժանդակ օգնություն սահմանապահներին» նախաձեռնության հեղինակ, կինոռեժիսոր ԱՐՃԱԿ ԶԱՔԱՐՅԱՆԸ շուտով հանդիսատեսի դատին կհանձնի իր նոր 22 րոպեանոց «Շուկ» ֆիլմը, սակայն այս անգամ այն հասանելի չի լինի համացանցում, ինչի մասին «Իրավունք» հետ գրույցում նա մշեց հետեւյալով. «Օճայն տարբերակով չի լինելու ֆիլմի ցուցադրությունը, որովհետեւ մի քանի պրեմիերաներ են նախատեսված Արցախում, Երևանում և, ըստ երեւոյից, ֆիլմը կշրջագայի նաև շրջաններում, մասնավոր՝ սահմանամերձ: Հետո արդեն կորոշվի ֆիլմի ճակատագիրը: Համացանցում չեն պատրաստվում հիմա ֆիլմը տեղադրել, որովհետեւ «ֆիս» են սովորել, որ բավական չէ շահ չհետապնդող ֆիլմ են նկարահանում, դեռ մի բան էլ իրենց «ակժիվիստ» կամ Եսիմ ինչ համարող ինչ-որ «թուլեք» քննադատեն կամ ասեն՝ Արշակը պատվեր է կատարում, չի հասնում իրենց: Իսկ իմ ընկերներին ես ձեւ կգտնեմ, թե ինչպես ֆիլմը նայեն: Բայց իմ ժողովրդի հետ մեկտեղ չեմ ուզում, որ ամեն մի անարժան մայի ֆիլմն ու ավելորդ խոսքի, քանի որ այն մեր բանակի ու զինվորի մասին է»:

ՀՐԱՆՑ ՍԱՐԱՅԱՆ

ԳՅՈՒՄՐԻԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ ԲԱՅՎԵՑ ՄՅԵՐ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՓՈՔՐ ԴԱՅԼԻՃ

Գյումրիի Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնը 150-ամյակը, այդ կապակցությամբ՝ աճեմյանական բեմում անցկացվեց թատրոնի գեղարվեստական ղեկավար Լյուդվիգ Հարությունյանի բեմադրությամբ՝ հորեյանական



«Դատավարություն», որտեղ վկաների դերում՝ հայ բեմի մեծանուն արտիստներն էին, ովքեր իրենց մասնագիտական կենսագրությամբ ու ստեղծագործական աշխատանքով կապված են եղել Գյումրիի դրամատիկական թատրոնին:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ վարչապետ Հովիթ Աբրահամյանը և մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը: Հորեյանական միջոցառումները մեկնարկեցին վերանորոգված Միեր Մկրտչյանի անվան փոքր բեմի բացման արարողությամբ: Գյումրու թատրոնն արդեն ունի 70 հանդիսականի համար նախատեսված դահլիճ, որի բացումն ազդարարվեց մեծ դերասանի մասին պատմող տեսանյութով: Ի դեպ, փոքր բեմ ունենալու զարգացման տարիների պատմություն ունի, և թղթից գործի է վերածվել՝ 150-ամյակի հորեյանական միջոցառումների շրջանակում: Դահլիճի բացմանը հաջորդեց «Թատրոնը՝ ժամանակի ափի մեջ» խորագրով թատրոնի ճեմարահուն բացված լուսանկարների և ներկայացումների մանրակերտերի ցուցահանդեսը, որն ըստ էության պատմեց 150-ամյա թատրոնի դիտարժան ներկայացումների մասին:

Թատրոնի անցած ուղու մասին պատմեց նաև «Դար ու կես եւ 60 րոպե» փաստավավերագրական ֆիլմը՝ արխիվային նյութերից, մասնագիտական գրականությունից, ժամանակի մամուլից, թատրոնի մարդկանց հուշերից ու անցած տարիների բեմական կյանքի պատմողներից:

ԼԻԼԻԹ ԵՐԻԱԶԱՐՅԱՆ

ՇԻՐԱՅՐ ՍԷՖԻՆՍՆԻ ԶԱՅԵՐՈՎ՝ «ՊԻՆՔՎԻՆ ՎԻՆ» ՄՈՒՏՏԻՄԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ

Եղանակը խանգարում է, գնում են, գնում, եվ արդեն վաղուց ես հյուր եմ այս օտար երկրում:

ՀՈՎԿԱՐԱՅԻՆ ԱՆՋԱՏԱՆ ՍԵՏՄԱՅՈՎ

Ըստ «Էլբատ» մարտկոցներ արտադրող ընկերության՝ Տեր-Պետրոսյանը նմանվել է հնացած «ակումյատորի»:

ՀԱՅՏՆԻ ԱՍԱԳՎԱԾՔԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ (ՌՈՒՄ-ԹՈՒՐԱՅՎԱՆ)

Հարաբերություններում սրբաբանի ԼՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) Եթե ռուսները մեծ եղբոր տրորում են, փոքր եղբայրը իրեն անում է:

ՍԱԵՈՒՆՅՈՒՆ ԵՒ ԿՅՈՒՄԻ ՀԱՆՁՆԱՏՈՂՈՎԻՆ

(ՇԱՄՅՈՒՆ «ԿՈՒՆԱՏԵՆ-ԿՐՈՆԱԲՐԵՄ» ՀԱՅՏՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) Բռնաբարելը հասկացանք, բա գլխատե՛լս որն ա:

ՊԱՆՈՒՄԻԱ

(ՌՈՒՄԱՍՏԱՆՈՒՄ ԹՈՒՐԵՒՄՅՈՒՆ ԴԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՋՄԱՆ ԵՎ ՍՈՐՈՒՅԻ ՀԻՆՆԱԴՐԱՄԵ ՓՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ) Ըստ Ռուսաստանի սանեպիդ ծառայության՝ Պուտինը սկսել ա համառուսական «Большая стирка»:

ԱՄԱՆՈՐԱՅԻ ՀԻՆ ԱՍԱԳՎԱԾՔԻ ՆՈՐՈՎԻ

Չուտենք թուրքական մանդարին, շնորհավոր Նոր տարին:



ՄԱՐԶԱԿԱՆ

ՆՄԱՆ ԵԼՈՒՅԹՆԵՐՈՎ ՕԼԻՄՊԻԱԴԱՅՈՒՄ ԻՆՉԻ՝ ԿՅԱՍՆԵՆ

Շանրամարտի կանանց և տղամարդկանց Հայաստանի հավաքականները ավարտեցին իրենց ելույթները ԱՄՆ-ի Հյուսթոն քաղաքում կայացած աշխարհի առաջնությունում:

Այսպիսով հայ մարզիկները ելույթները և արդյունքները կարելի է գնահատել լավ, թեև ոչ բոլորը ներկայացան իրենց ուժերի ողջ չափով:



րդ տեղը թիմին բերելով վարկանիշային միավորներ: Անակնկալ արդյունք գրանցեց Տիգրան Մարտիրոսյանը, ում հետ հիմնականում կապված էին թե մեդալի եւ թե վարկանիշային միավորների հույսերը:

Սյայիսով ծանրամարտի Հայաստանի հավաքականը նվաճեց հինգ օլիմպիական ուղեգիր, ինչն իհարկե դրական արդյունք է, հատկապես որ այս պահի դրությամբ բացի ծանրորդներից, օլիմպիական ուղեգիր նվաճել են միայն Արթուր Ալեքսանյանը, Միհրան Հարությունյանը, Լեւոն Բերիանիձեն եւ մարմնամարզիկ Հարություն Մերդինյանը: Բայց նաեւ նկատենք, որ բացի օլիմպիական ուղեգրերից մեր ծանրորդներն այլեւս ոչնչով երկրպագուներին չուրախացրին: Հանրագումարում օլիմպիական ուղեգիր լավ բան է, բայց նման ելույթներով այնտեղ ինչի՞ կհասնեն:

ՔՐԻՍՏԻՆ ԴԵՏՐՈՍՅԱՆ

ISSN 1829-2240 1 5 1 3 1 > 9 7 7 1 8 2 9 1 2 2 4 0 0 7

ԳՈՎԱԶԴ (010) 53-67-30 (091) 49-60-97

ԵՐԱՅՈՒՆ 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22 23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 41 42 43 44 45 46 47 48 49 50 51 52

Գործընկեր: 1. Աշխարհ 7. Այովա 8. Ծաղկոլ 9. Ազենտ 10. Կուզուար 11. Ջագեր 15. Դելանո 16. Մեխիկո Ուղղահայաց: 2. Ենածուկ 3. Անկյուն 4. Հաղարջ 5. Չոներգ 6. Ռապտոր 12. Ալլուլյա 13. Եզնակ 14. Դդում

ՀԱՐԳԵԼԻ ԲԱՐԵՎԱՄԵՐ «ԻՐԱՎՈՒՆԷ» ԵՆ «ՀԵՏԱՔԵՆՈՒԹՅՈՒՆ», ինչպես նաեւ՝ «КОМСОМОЛЬСКАЯ ПРАВДА В АРМЕНИИ» ԵՆ «АРГУМЕНТЫ НЕДЕЛИ В АРМЕНИИ» Թերթերի ընթերցողներին սիրով հայտնում ենք, որ սկսվում է 2016 թվականի բաժանորդագրությունը: Հարգելի՛ ընթերցողներ, բաժանորդագրվե՛ք, որպեսզի դուք ստիպված չլինեք առավոտ կանուխ արթնանալ եւ շտապել մոտակա կրպակ կամ կրպակից կրպակ՝ կորցնելով ձեր ժամանակը՝ փնտրվող թերթերը ձեռք բերելու համար: Դուք կարող եք բաժանորդագրվել նաեւ էլեկտրոնային PDF տարբերակով: Մեր ներկայացուցիչը կայցելի ձեզ եւ կծեակերպի բաժանորդագրությունը: Նախատեսված են զեղչեր եւ նվերներ՝ մինչ 2016 թվականի հունվարի 31-ը բաժանորդագրվողների համար: ՆՈՐ ՏԱՐԻՆ սկսենք միասին: Դեռ՝ 010 53 90 11, 010 53 67 30, 091 41 32 95

25 ՏԱՐԻ Հայաստանի Հանրապետության Անկախության 1991-2016 ԱՐԻՆ ՎԱՃԱՔՈՒՄ 2016 ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՐՏ

ԼԱՎԱԳՈՒՅՆՆԵՐ ԵՎ ՎԱՏԱԳՈՒՅՆՆԵՐ Զարգելի ընթերցողներ, տարին մոտենում է ավարտին: Գալիս է 2014 թվականն ամփոփելու ու գնահատելու պահը: Առաջարկում ենք ձեզ, նշել անցնող տարվա լավագույն ու վատագույնը. ա) Պետական գործիչներին բ) Քաղաքական գործիչներին գ) Տնտեսական գործիչներին դ) Մշակութային գործիչներին ե) Մարզաշխարհի ներկայացուցիչներին զ) Բժիշկներին ը) Կրթության ոլորտի ներկայացուցիչներին ճ) Գիտության ներկայացուցիչներին թ) Իրավապահ մարմինների ներկայացուցիչներին ռ) Չինվորականներին Եւ այլ ոլորտների աչքի ընկած մեր հայրենակիցներին: Ամփոփումը կկատարվի «Իրավունք» 2015թ. հունվար ամսվա համարներում: Զեր կարծիքները կարող եք ուղարկել էլ. փոստով կամ նամակով: Հասցե. ք. Երևան, Եգ. Կողբացի 50ա, iravunk@iravunk.com